ՀԱՄԱԼԻՐ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՄՄԱՌՎ-ԳՀԾՁԲ-20/1

ք. Դիլիջան «19» դեկտեմբերի 2019թ.

«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամը ի դեմս տնօրեն՝ Գ. Սարգսյանի, որը գործում է «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Պռո ԷՄ ԷՍ» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Ս.Մելիքյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Համալիր ինժեներական ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **60 000 000 /վաթսուն միլիոն/** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամ	«Պրո ԷՄ ԷՍ» ՍՊԸ
ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1,26/1	ք. Դիլիջան Գետափնյա 7, փ/կ 3903
,,Արարատբանկ,,	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1510042359830100	Հ/Հ 1930066692640100
ՀՎՀՀ 07619891	ՀՎՀՀ՝ 06948651
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.S.

Հավելված N 1
«19» դեկտեմբերի 2019թ. կնքված
ՄՄԱՌՎ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	71341100	Համալիր ինժեներական ծառայություններ Տեխնիկական բնութագիրը կից ներկայացվում է	դրամ	60000000	1	ՀՀ, Դիլիջան քաղաք, Պարզ լճի 5, 24/1 և 26/1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 2020թ.-ի դեկտեմբերի 31-ը:

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1.ՀՀ ՊՆ Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանում տեղադրված են շվեյցարական Schindler ապրանքանիշի վերելակներ: Վերելակները տեղադրված են հետևյալ մասնաշենքերում՝

1. **Հիմնական մասնաշենքում՝ 6 մարդատար վերելակ,**
2. **Յոթ հարկանի հյուրանոցային մասնաշենքում՝ 1 մարդատար վերելակ, 1 բեռնատար վերելակ,**
3. **Սպորտային մասնաշենքում՝ 1 մարդատար վերելակ:**

Վերելակների շահագործումն անհրաժեշտ է իրականացնել համապատասխան թույլտվություն (լիցենզիա) ունեցող մասնագիտացված կազմակերպության հետ վերելակների տեխնիկական շահագործման պայմանագրի շրջանակներում՝ Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին ՀՀ օրենքի և «Վերելակների և դրանց շահագործման անվտանգության պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 09.02.2006թ. թիվ 692-Ն որոշման պահանջներին համապատասխան:

ՀՀ տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին ՀՀ օրենքի պահանջներից ելնելով՝ օբյեկտը շահագործող անձնակազմում պետք է ներգրավված լինեն վերելակների և դրանց շահագործման անվտանգության կանոններ

դասընթաց անցած և որպես վերելակավար աշխատելու թույլտվություն ունեցող աշխատակիցներ:

ԿՆՔՎԵԼԻՔ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Տեխնիկական միջոցի անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
Կաթսայի այրիչի ՕԳԳ-ը չափող սարք՝ ծխագազերի անալիզ իրականացնելու մեթոդով	TESTO կամ համարժեք	1

2. ՀՀ Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի (այսուհետ՝ սպասարկման օբյեկտ կամ օբյեկտ) ճարտարագիտական համակարգերի սարքավորումների տեխնիկական սպասարկմանը և ապասարկող անձնակազմին ներկայացվող պահանջներ

1. Տեխնիկական անձնակազմին ներկայացվող պահանջներ.

1.1. Տեխնիկական սպասարկման անձնակազմում նեղ մասնագիտացում ունեցող ղեկավար պատասխանատու տեխնիկական անձնակազմի առկայությունը պարտադիր է (աշխատանքային գրաֆիկ՝5/2, 8 ժամ): Մասնավորապես՝

ա. Էլեկտրատնտեսության պատասխանատու ճարտարագետ՝ պետք է ունենա «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին ՀՀկառավարության 23.11.2006թ. թիվ 1939-Ն որոշմանը համապատասխան էլեկտրաանվտանգության խումբ.

բ. Ջերմամատակարարման համակարգի պատասխանատու ճարտարագետ՝ պետք է ունենա արտադրական վտանգավոր օբյեկտների տեխնիկական անվտանգության պահանջների պահպանման տեխ. Հննման և վերահսկման պատասխանատու անձի համապատասխան որակավորում.

գ. Հրդեհային անվտանգության պատասխանատու ճարտարագետ՝ ՀՀ հրդեհային անվտանգության օրենսդրության խորացված իմացությամբ.

դ. Ցածր լարման համակարգերի պատասխանատու ճարտարագետ.

1.2. Սպասարկան օբյեկտում 24-ժամյա (աշխատանքային գրաֆիկ՝ 2/2, 12 ժամ) հերթապահություն իրականացնող 1 հերթապահ ճարտարագետի ներկայությունը պարտադիր է: Հերթապահ անձնակազմին ներկայացվող պահանջները՝

ա. Յուրաքնչյուր հերթափոխում 1 հնոցապանի (պետք է ունենա հնոցապանի որակավորում) առկայությունը պարտադիր է:

1.3. Կատարողի աշխատակիցները, եթե դա պահանջում է ՀՀ օրենսդրությունը, պետք է ունենան թույլտվություններ, որակավորում, վկայականներ և նորմատիվ ակտերով սահմանված այլ փաստաթղթեր, որոնք իրենց թույլ են տալիս իրականացնել համապատասխան տեսակի գործունեություն:

1.4. Բարձրագույն մասնագիտական կրթությունը պարտադիր է ղեկավար պատասխանատու տեխնիկական անձնակազմի (կետ 1.1) համար:

1.5. Աշխատանքային փորձին ներկայացվող պահանջներ՝

ա. Գլխավոր ճարտարագետ՝ պետք է ունենա առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, որից առնվազն վերջին 1 տաարին կատարող կազմակերպությունում.

բ. Պատասխանատու ճարտարագետ՝ պետք է ունենա առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, որից առնվազն վերջին 1 տաարին կատարող կազմակերպությունում.

գ. Հերթապահ ճարտարագետ՝ պետք է ունենա առնվազն 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, որից առնվազն վերջին 6 ամսում կատարող կազմակերպությունում:

2. Տեխնիկական անձնակազմը պետք է կրի պատվիրատուի կողմից նախապես համաձայնեցված միասնական համազգեստ:

3. Սպասարկման օբյեկտի բազային ճարտարագիտական համակարգերի սարքավորումների տեխնիկական վիճակի հսկողությունը և տեխնիկական սպասարկումը պետք է իրականացվի սույն պահանջներին կից ցանկում նշված սարքավորումների կանխարգելիչ սպասարկման ծառայություններին համապատասխան:

4. Սպասարկվող օբյեկտի սարքավորումները սպասարկման և շահագործման ընդունելուց հետո տեխնիկական անձնակազմի կողմից կանխարգելի չսպասարկման ծառայությունների ցանկը պարտադիր պետք է համապատասխանեցվի տվյալ սարքավորման տեխնիկական անձնագրով նախատեսված առանձնահատկություններին:

5. Տեխնիկական անձնակազմը սպասարկման օբյեկտի բազային ճարտարագիտական համակարգերի սարքավորումների տեխնիկական վիճակի հսկողությունը և տեխնիկական սպասարկումը պատշաճ կարգով իրականացնելու համար պետք է ապահովի անհրաժեշտ ծախսանյութեր և համապատասխան մասնագիտական գործիքներ:

6. Օբյեկտի սպասարկման ողջ ընթացքում պետք է կատարվեն ընթացիկ վերանորոգման և ներկարարական աշխատանքներ (նկարագրությունը սույն պահանջներին կից ցանկում՝ կետ 2):

6.1. Տեխնիկական սպասարկման անձնակազմում պետք է առկա լինի 2 ներկարարի հաստիք (աշխատանքային գրաֆիկ՝ 5/2, 8 ժամ): Ներկարարները պետք է ունենան 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ:

3 Տեխնիկական սպասարկման անձնակազմը, պարտադիր հաշվի առնելով նաև կոնկրետ սարքավորման տեխնիկական անձնագրով նախատեսված առանձնահատկությունները, պետք է իրականացնի նշված համակարգերի սարքավորումների կանխարգելիչ սպասարկման աշխատանքնի հետևյալ տեսակները.

1.1. Ջեռուցման և օդորակման համակարգ *

Սպասարկման տեսակը	Սպասարկման բովանդակությունը
Ամսական (Ա)	Օդային ֆիլտրի մաքրում: Ագրեգատի չափից ավելի վիբրացիայի առկայության ստուգում: Կափույրներիաշխատանքիստուգում: Թերմոստատի, բլոկի էլեկտրական և մեխանիկական տարրերի աշխատանքի ստուգում: Բլոկի մաքրում, պատյանից (կորպուսից), ջերմափոխանակիչից, կոնդենսատի տակդիրից փոշու և կեղտի հեռացում: Ջրով կոնդենսատային մագիստրալի փորձարկում:
Կիսամյակային (Կ)	Ամսական հանձնարարության կատարում: Ստուգում և անհրաժեշտության դեպքում բոլոր էլեկտրական միացումների ձգում:
Տարեկան (Տ)	Ամսեկան և կիսամյակային հանձնարարությունների կատարում: Աշխատանքային հոսանքի ստուգում: Ջերմափոխանակիչի մաքրում:

ծախսանյութերի օգտագործում (ֆիլտրեր և ֆիլտրանյութեր, գլիկոլ՝ լրալիցքավորման համար, տեխնիկական մանրաթելեր, մեկուսիչ ժապավեններ, մաքրողնյութեր, թերթավոր խցանյութ (պարոնիտ), հաբավորվածաղ, խտարարներ, ճկուն միացություններ, կցամասեր, խողովակաշարային արմատուրա, ստանդարտ ամրակման դետալներ և այլն) կատարող կազմակերպության միջոցների հաշվին

1.1.1. Կաթսայատուն*

Կազմակերպությունում առկա բոլոր կաթսաների և դրանց այրիչների տեխնիկական սպասարկում, կարգաբերում, ըստ *ՀՀ կառավարության 25.09.2008թ. թիվ 1083-Ն որոշման համապատասխան որակավորում ունեցող մասնագետների կողմից*

Սպասարկման տեսակը	Սպասարկման բովանդակությունը
Ամսական (Ա)	Այրիչների կարգաբերում, ծխագազերի հետազոտություն (O_2, CO,CO_2) ջերմաստիճանների որոշում հնարավոր բարձր ՕԳԳ ապահովելու նպատակով:
Տարեկան (Տ)	Կաթսաների այրման խցիկների և այրիչների ամբողջական մաքրում:

*ընթացիկ ծախսանյութերի օգտագործում կատարող կազմակերպության միջոցների հաշվին

1.2. Օդափոխման համակարգ*

Սպասարկման տեսակը	Սպասարկման բովանդակությունը
Ամսական (Ա)	Ֆիլտրերի փոխարինում և լվացում: Փոկերի վիճակի և դրանց լարմանստուգում: Ագրեգատի չափից ավելի վիբրացիայի առկայության ստուգում: Ամբողջ ագրեգատի մաքրում ներսից, հեռացնելով փոշին և կեղտը պատյանից և օդափոխիչի թիակներից: Ագրեգատի պատյանի արտաքին մասի ամբողջությամբ մաքրում: Տեխնիկական շինության տարածքի մաքրում:
Եռամսյակային (Ե)	Ամսական հանձնարարության կատարում: Օդափոխիչի և շրջանառու պոմպի հոսանքի չափում: Բոլոր էլեկտրական հպակների ստուգում և ձգում: Օդափոխիչի ճաղավանդակի, ջերմության և օդի ծախսի տվիչների աշխատանքի ստուգում (անհրաժեշտության դեպքում ստուգաճշտում): Ստուգում աշխատանքը արտածծող օդափոխիչի հետ միաժամանակ:
Կիսամյակային (Կ)	Ամսական և եռամսյակային հանձնարարությունների կատարում: Առանցքակալների յուղում:
Տարեկան (Տ)	Ամսական, եռամսյակային և կիսամյակային հանձնարարությունների կատարում: Աշխատանքային հոսանքի ստուգում: Ջերմափոխանակիչները մաքրել:

* ծախսանյութերի օգտագործում (ֆրեոն՝ լրալիցքավորման համար, յուղ՝լրալիցքավորման համար, յուղի ֆիլտրեր, օդի ֆիլտրեր, պրոպան, թթվածին, ազոտ, եռակցման էլեկտրոդներ, զոդման հալանյութ, լվացող նյութեր ֆանկոյլների համար, քսանյութեր, պարկեր, մեկուսիչ ժապավեն, ստանդարտ ամրակման դետալներ և այլն) կատարող կազմակերպության միջոցների հաշվին

1.3. Ջրամատակարարման ջրահեռացման համակարգ (ներառյալ տնտեսական/ խմելու ջրի խողովակաշարը, հրդեհային խողովակաշարը, հրշեջման ցայտաջրմուղային համակարգիը ջրահեռացումը, սանտեխսարքերը)*:

Սպասարկման տեսակը	Սպասարկման բովանդակությունը
Ամսական (Ա)	Սարքավորման արտաքին զննում՝մեխանիկական վնասվածքների բացակայության, ջերմամեկուսիչի ամբողջականության, կապարակնիքների առկայության, ամրակման հուսալիության ստուգում:
Կիսամյակային (Կ)	Ամսական հանձնարարությունների կատարում: Ջրի ֆիլտրերի լվացում: Ջրահեռացման պոմպակայանի լվացում և ախտահանում:
Տարեկան (Տ)	Ամսական և կիսամյակային հանձնարարությունների կատարում: Սոլենոիդային «ՆՋ» փականի գործարկման ստուգում:

* ծախսանյութերի օգտագործում (մաքրող նյութեր, պարկեր դրենաժային գետնախորշի մաքրման համար, քսանյութ, թելեր և ժապավեններ, լատունե նիպելներ, խտարարներ, միջադիրներ, ճկուն միացություններ, ֆիթինգներ, խողովակաշարային արմատուրա և այլն) կատարող կազմակերպության միջոցների հաշվին

1.4. Էլեկտրասարքավորման ուժային և լուսավորության համակարգերի 380/220 վոլտ ներքին համակարգը Պատվիրատուի հաշվեկշռային պատասխանատվության տիրույթում, ներքին էլեկտրամատակարարման համակարգ*:

Սպասարկման տեսակը	Սպասարկման բովանդակությունը
Ամսական (Ա)	Շահագործման և բեռնվածության պայմաններին սարքերի համապատասխանության ստուգում: Սարքավորմանը, մալուխներին և այլնին միացրած ավտոմատանջատիչների նոմինալի ստուգում: Սարքերի արտաքին և ներքին զննում և տեսանելի վնասվածքների վերացում: Վահանի սարքերի մաքրում: Սարքերին միացված էլեկտրահաղորդագծի և հողանցման ցանցերի սարքինության ստուգում: Ամրակցման դետալների ձգում, հպակների մաքրում կեղտից և մակահալվածքներից: Փականների, փոխարկիչների, բռնիչների և այլն սարքինության ստուգում: Մեկուսիչի վիճակի ստուգում (մեկուսիչների վրա ճաքերի, փոշու առկայությունը): Մակնշումների, պիտակների և նշանների առկայության ստուգում պանելների դռնակների վրա: Դիմադրության տարրերի, հպակների տաքացման ստուգում,վահանների, պանելների և սարքերի վրա համապատասխան գրությունների առկայության ստուգում: Մեխանիկական բլոկավորման առկայության և սարքինության ստուգում: Ազդանշանային սարքերի աշխատանքի և սարքերի վրա կապարակնիքների ամբողջականության ստուգում:

Կիսամյակային (Կ)	Ամսական հանձնարարությունների կատարում: Հպակային միացումների ինֆրակարմիր սկանավորման կատարում: Հպակային միացումների միջաձգման կատարում:

* ծախսանյութերի օգտագործումը (լամպեր, մարտկոցներ, մեկնարկիչներ, անուրներ, սեղմակներ և այլն) կատարող կազմակերպության միջոցների հաշվին

1.5. Հակահրդեհային ազդանշանային համակարգի, հրշեջման և հրդեհի ազդարարման համակարգը, պահպանության համակարգը,հակահրդեհային ինքնավար ազդանշանային համակարգի հրդեհի ազդարարման համակարգի կանխարգելիչ սպասարկման կանոնակարգ

Սպասարկման տեսակը	**Սպասարկման բովանդակությունը**
Ամսական (Ա)	Համակարգի բաղկացուցիչ մասերի արտաքին զննում, որի նպատակը մեխանիկական վնասվածքների, կեղտի առկայության բացառումը, ամրացման դիմացկունությունը և այլն ստուգելն է: Անջատիչների և փոխարկիչների աշխատանքային դիրքի, լուսային ցուցանշման սարքինության վերահսկում, ընդունիչ սարքերի կապարակնիքների առկայության ստուգում: Սնուցման հիմնական և պահուստային աղբյուրների վերահսկում և սնուցման փոխարկման ստուգում աշխատանքային ներանցիչից դեպի պահուստայինը: Համակարգի բաղադրատարրերի աշխատունակության ստուգում (ընդունիչ-վերահսկող սարքի, ազդասարքերի, տեղեկացնող սարքերի, ազդանշանային սարքերի շլեյֆի հարաչափերի չափում): Համակարգի աշխատունակության ստուգում ձեռքի (տեղային, հեռավար) և ինքնավար ռեժիմներով:
Տարեկան (Տ)	Պաշտպանիչ և աշխատանքային հողանցման դիմադրության չափում:

1.6. Հակահրդեհային ջրմուղ համակարգի կանխարգելիչ սպասարկման և օպերատիվ կառավարման կանոնակարգ

Սպասարկման տեսակը	**Սպասարկման բովանդակությունը**
Ամսական (Ա)	Համակարգի (տեխնոլոգիական մասի՝ խողովակաշարերի, փակիչ արմատուրի, հրշեջ ճկափողերի) բաղադրատարրերի արտաքին զննում, որի նպատակը մեխանիկական վնասվածքները, կեղտը, կոռոզիայի, արտահոսքի բացառումը, ամրացման դիմացկունությունը, կապարակնիքների առկայությունը ստուգելն է: Փակիչ արմատուրայի աշխատանքային դիրքի, ճնշման վերահսկում:
Կիսամյակային (Կ)	Խողովակաշարի լվացում և ջրիփոխում:
Տարեկան (Տ)	Աշխատունակության ստուգում: Խողովակաշարերի հիդրավլիկ և պնեվմատիկ փորձարկումներ հերմետիկությունը և ամրությունը ստուգելու նպատակով:

* ծախսանյութերի օգտագործում (մարտկոցներ /սնուցման տարրեր/ և այլն) կատարող կազմակերպության միջոցների հաշվին

* ընթացիկ ծախսանյութերի օգտագործում և սարքավորումների նորոգում կատարող կազմակերպության միջոցների հաշվին

4. Հարակից ծառայությունները ներառում են՝

1. Սպասարկման օբյեկտում կատարվող մանր վերանորոգման աշխատանքներ՝

ա) մանր թերությունների և անսարքությունների տեղայնացում և վերացում.
բ) դռների և պատուհանների փականների, ծխնիների, բռնակների, խտարարների, չափաբերիչների, վերնափեղկերի կարգաբերում, ընթացիկ վերանորոգում
գ) ծախսանյութերի օգտագործում (շինանյութ /գիպս, սոսինձ, ծեփ, ներկեր/, վրձիններ, գլաններ, թաղանթ, կպչուն ժապավեն /սկոտչ/, մոնտաժի փրփուր և հրշեջ փրփուր, քսանյութեր, մաքրող նյութեր, ստանդարտ ամրակման դետալներ և այլն):

Տեխնիկական բնութագրով պահանջվող լիցենզիաները, որակավորումները, սերտիֆիկատները անհրաժեշտ է ներկայացնել պայմանագրի գործողության շրջանակներում Պատվիրատուի կողմից նման հիմնավոր պահանջ ստանալու օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամ	«Պռո էՄ էՍ» ՍՊԸ
ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1,26/1	ք. Դիլիջան Գետափնյա 7, փ/կ 3903
,,Արարատբանկ,,	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1510042359830100	Հ/Հ 19300666926401000
ՀՎՀՀ 07619891	ՀՎՀՀ 06948651
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 2
«19» դեկտեմբերի 2019թ. կնքված
ՄՄԱՌՎ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71341100	Համալիր ինժեներական ծառայությունների													100 %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Մոնթե Մելքոնյանի անվան
ռազմամարզական վարժարան» հիմնադրամ
Քաղաք Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1,26/1
,,Արարատբանկ,,
Հ/Հ 1510042359830100
ՀՎՀՀ 07618890

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«Պռո ԷՄ ԷՍ» ՍՊԸ
Քաղաք Դիլիջան Գետափնյա 7, փ/կ 3903
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300666926401000
ՀՎՀՀ՝ 06948651

(ստորագրություն)

Կ.Տ.